ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 276-Ա/2 **«27» փետրվարի 2024 թ.**

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 1471-Ն որոշման N 1 հավելվածի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով մշակութային արժեքների փորձաքննություն անցկացնող մասնագետների հավատարմագրման խորհրդի 2024 թվականի փետրվարի 21-ի նիստի եզրակացությունները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել մշակութային արժեքների փորձագետի հավատարմագրման վկայագրեր ստացող անձանց ցանկն (ըստ ոլորտների)՝ համաձայն հավելվածի:

2. Տրամադրել մշակութային արժեքների փորձագետի հավատարմագրման վկայագրերը:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության վարչության պետ Աստղիկ Մարաբյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 1471-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգին համապատասխան՝ ապահովել մշակութային արժեքների փորձագետի հավատարմագրման վկայագրեր հանձնելու գործընթացը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանին:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**